


ԲԱԺՆԵԳԻՆ
Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
վեցամս. 5 "

Վրաստան
Տարեկ. 12 ֆր.
վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ 30 սենտ
ԱՄՆԻԿ



ՊԱՅՄԱՆՔ
Գրութիւնք եւ
չեն տրուիր

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՃԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳՍՅՈՒՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

— Огговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Դ. ՏԱՐԻ

ՅՈՒՆՎ. 27 ՇԱՐԱՍ 1901

ԹԻԻ 197

ՊԱՏԱՍԽԱՆՍ

«ԻՐԱՒՈՒՆՔ»Ի ՀԱՐՅԱՊՆԴՈՂՆԵՐՈՒՆ

(Շար. եւ վերջ)

Չունիմ բարեբաղդաբար ընթերցողներս հարթ ընելու պէտք եղած մագիչ գրիչը և ոչ ալ զանոնք անակնկալներով չլմորելու լիբր ղոցանքը՝ նման ան սուտերու անպատկառ շարքին, որ այնքան արիւնոտ գիծեր ձգեցին մեր յեղափոխական մօտիկ գործունէութեան բոլոր արհաւրալից պատմութեանը մէջ:

«Մէկ տարիէն Հայաստանը ապտտելու» ցնորական յայտարարութիւնները եւ կամ «Վոսբորի փին վրայ» պանքի պօմպին հետ Սնգլիական գրօշին ծածանումը ապահովող պոռոտ ու նկարագրող սուտերը ի հարկէ ոչ ոքէ մոռցուած են մինչև հիմայ: Աստուք, առ սուտն ինչ էին, որ վրդուեցին ամբոխին ականջը և զանի հաճելի ինքնասպանութեան մը խոշոր պատրանքին մատենցին անապաշտ ու անպատիժ:

Թող ինծի վերապահուած չըլլայ ատանկ անուկնկալներու յերկրումը մեր ձեռք առած հարցին մէջ և ոչ ոք թող չսպասէ լսել ինձմէ, թէ կրթական այս անկերպարան վիճակը կարելի է Մէկէն և ՇԱՏ ԿԱՐՃ ժամանակի մէջ բարեփոխել:

Ազգերու ճակատագրին հետ առնչութիւն ունեցող ամեն գործ կը գտնէ իր լուծումը՝ դա՛դաղ ու ժամանակի հօշոթումով: Զը կայ երակներու այնքան բազմատարր ու բազմաճիւղի համախառնութիւն, քան որքան լեւնաւաճող մեղի պէս բազմակողմանի ժողովուրդի մը, որ իր ազգային հինցած հիւանդութիւնները, իր նախապաշարումները և իր մօլութիւնները ունի խորունկ

կերպով արմատացած: Ամեն խառի և ամեն երակի մէջ տարածուած առ հիւանդութիւնները դարձանել, առ նախապաշարումները ջնջել և առ մօլութիւնները չեղարացնել ժամանակի կարօտ է: Հետեւաբար չեմ կարծեր որ ընթերցողներուս ներումին չարժանանամ, եթէ մեր կրթական փրկութեան հանգրուանը շատ մօտ ցրցնելու սուտ անակնկալը խնայեմ իրենց:

Ըսենք է՛ն առաջ թէ Հայ ժողովուրդին ապրած միջավայրը և հետեւաբար զինք չընապատող քաղաքական հանգամանքները նոյն չեն ամեն տեղ. այնպէս որ ու է ծրագիր չը կրնար գործադրուիլ անփոփոխ՝ ինչպէս Պուլկարիոյ, նոյնպէս և Տաճկաստանի, ինչպէս Ռուսիոյ, նոյնպէս և Պարսկաստանի մէջ: Առ այժմ, մեր ըսելիքները կը վերաբերին Պուլկարահայ գաղութին, որ հակառակ իր վայելած գնահատելի ազատութիւններուն, ժայտերու պէս ամուլ քօսանէ աւելի կըրթական տարն շրջաններ բոլորած է:

Ի հարկէ ոչ ոք կ'ուրանայ թէ համայնքի մը կրթական վիճակը համընթացաբար բարեփոխելու է՛ն փրկարար միջոցը՝ ծրագրի միօրինակութիւնն է, ինչ որ բացարձակապէս կը պակսի մեր Պուլկարահայ վարժարանաց մէջ:

Տեղ մը բարձրագոյն նախակրթարանի ծրագրերն է, որ կը մոնէ աչքդ իր իր անվերջանալի ութիւններու ցից շարքովը, տեղ մը՝ պարզ նախակրթարանի իսկ ուրիշ տեղ մըն ալ առ երկուքին մէջ տատանող աշտին ճիւղն գրութիւն մը, ամենքն ալ՝ քիչ բացառութեամբ՝ կառավարուած անանկ ողորմելի մարդիկներէ, որ տակաւին իրենք պէտք ունին երկար տարիներ ման-

կական գրասենյակներու հետ եղբայրակցելու, որպէս զի ամեն բանէ առաջ մարդուն կոչումը ճանշանն է իմաստակութեան վարակիչ շապիքը մէկդի նետեն իրենց վրայէն:

Ծրագիրը պէտք է միօրինակ ընել ամենուրեք, յորս դաստիարակեց կազմուած պարզ նախակրթարանի ծրագիրը մը, ուրկէ պէտք է վանենք—Հայ եւ Պուլկար լեզուէն զատ—ուրիշ եւրոպական լեզուները եւ զոր կրնանք ձեռն առնել վարժարաններու ծրագրին վրայ, նկատելով բարեբաղդաբար որ աս վերջիններուն կրթական ուղղութիւնըն ալ Գերմանական է Ռուսականին ազդեցութեան ներքեւ:

Ատ ծրագրի խղճամիտ գործադրութիւնը՝ իր պարզութեանը մէջ, մեր վարժապետներէն չը պահանջեր նշանաւոր ու բազմակողմանի հմտութիւն, այլ միայն խորունկ պարկեշտութիւն մը, որ իր պարտքին նուիրականութիւնը ճանշնայ եւ անոր համեմատ նուիրուի գործին անկեղծօրէն. բան մը՝ զոր անկարելի չէ գտնել մեր վարժապետներու հինգ բանակին մէջ, եթէ մենք գիտնանք ընտրութիւն ընել:

Անգամ մը, որ մեր վարժարանները պարզ նախակրթարանի վիճակին վերածեցինք, նախ մտած կըլլանք այն ճամբուն մէջ, ուր իմաստակութիւնը՝ իր պոռօտութիւններու բացարձակ արտաքսումովը կը զադրի տիրապետելէ եւ ուր վերջապէս առողջ կրթութեան մը նախագուշակ մօտեցած կըլլանք անխաբօրէն:

Երկրորդ, մեր զաւակները պատրաստած կըլլանք տիրող տարրին բարձրագոյն վարժարաններուն համար, որ ինչպէս ըսինք, Գերմանական ըլլալով, համապատասխան է մեր փաղձաքննութեան եւ որ կենաց պայքարին մէջ ալ շատ կարեւոր է ու անհրաժեշտ:

Երրորդ, ինչ որ բարոյական անժխտելի առաւելութիւն մըն է, դաստիարակութեան միօրինակութեամբ գաղափարի համերաշխութիւնն պիտի գոյանայ Պուլկարահայ երիտասարդութեան մէջ մէկ ծայրէն միւսը եւ գիտէք թէ համեմաշխութիւնը ինչ փրկարար դեր ունի ազգային վերածնութեան գործին մէջ:

Չորրորդ մեր բոլոր վարժարանները պարզ նախակրթարանի վերածելով, Պուլկարահայը կարեւոր խնայողութիւն մը ըրած պիտի ըլլայ իր այսօրուան կրթական ծախուց մէջ, զոր կը վատնէ ապարդիւն եւ բացարձակապէս քմահաճօրէն:

* * *

Ու այս խնայողութեան միացնելով թոշակներէ գոյանալիք հասոյթը, անիկա կարող է ու եւ քաղաքի մէջ պահել 7ը դասարաններէ բաղկա-

ցած կեդրոնական երկրորդական վարժարան մը ճիշտ Գերմանական ուղղութեամբ եւ այսպէսով օժտել սերունդը առողջ կրթութեան մը բոլոր ձիրքովը առանց գոռարութեան ու մեծ զոհողութիւններու:

Այսպէս ուրեմն խնդիրը կամեցողութեան մէջն է, ուրիշ ոչինչ: Ատ կամքը, ատ հասկացողութիւնը կը պակսի մեր Ազգ. վարիչներու քով: Ասոնք բան մը չեն եւ բան մըն ալ ըլլալիք չունին: Ժողովուրդն է, որ պիտի փրկէ իր զաւակները ատ վարիչներուն քմահաճոյքէն, եթէ ինք օր մը գիտնայ գործածել իր ուժը մանաւանդ ընտրական գործերու մէջ:

Իցի՛ն թէ:

ԹՕՏԻՈՒՆ

ԱՅԴԱՅԻՔ

ՎԱՌՆԱՅԻ ԵՐԿՍԵՌՈՐԱԿԱՆՈՐԱՄԸ

Ասկէ առաջ տեղւոյս Թաղ. խորհուրդը Որբախնամի կանոնադրութիւնը վաւերացնելու համար անոր հաւաքելիք գումարներէն անխառնաբար հարիւրին 25 անպայման, իսկ հարիւրին տասը գօմէսին պահանջած էր, այս վերջին պարագային վճռելով որ Որբախնամը նուիրատուն չը հանէ, թատերական ներկայացում եւ կամ գօնսէր չը սարքէ եւ. Որբախնամն ալ նոյն կանոնագրութիւնը Պուլկար կառավարութեան ներկայացնելով անոր վաւերացումը խնդրած էր: Արդ գոհութեամբ կը ծանուցանենք թէ Պուլկար կառավարութիւնը Վառնայի Թաղ. խորհուրդէն առելի հոգածու ըլլալով մեր հայ որդերուն նկատմամբ, բարեհաճած է կանոնադրութեան վաւերացնել առանց գօմէսին, որով Որբախնամը այսուհետեւ պիտի կրնայ թէ՛ ներկայացումներ տալու եւ թէ՛ նուիրատուներ հրապարակ հանելու:

—Կը յիշեն ընթերցողք թէ տեղւոյս մասնաւոր վարժարաններէ մին՝ անցեալ յուլիսին իր վիճակացոյցերու բաշխման օրը ի նպաստ հայաստանի որբերու 47 ֆր. հանգանակած էր ներկայ գտնուող հանդիսականներէն ու նոյն գումարը սրբախնամ մարմնոյ մը կամ Պատրիարքարան շրկած ըլլալը չը յայտարարելէ զատ, (մինչեւ անգամ իրեն ռէֆրալ ընելու սահմանուած

կիսամսեայ հանդէսին մէջ) ըստ օրինի իրեն ուղ-
ղուած հրապարակային հարցումներուն ալ չէր
պատասխանած: Արդ կը լսենք թէ տեղւոյս Որ-
բանամբ՝ ամեն կողմէ յայտնուած փափագին
համաձայն, կառավարութեան միջոցաւ յիշեալ
վարժարանի որբասէր և պատուարժան տնօրէ-
նութենէն պիտի պահանջէ թէ՛ նոյն օրը հան-
գանակուած վերոյիշեալ գումարը և թէ՛ վար-
ժարանի սաներէն ի նպաստ որբերու հաւաքուած
21 ֆրանքը:

— Հայադգի նկարիչ Պ. Փ. Թէրլէմէզեան որ
անցեալ տարի Բարիզի Գեղարուեստից բարձրա-
գոյն վարժարանին իր ֆրանսացի և օտար բոլոր
ընկերներուն մէջ առաջինը հանդիսացած եւ ա-
ռաջին մրցանակը առած էր, ասկէ ամիս մը ա-
ռաջ ալ Ակադեմիին մէջ տեղի ունեցած մրցման
մասնակցելով, իր բազմաթիւ մրցակիցներուն մէջ
արժանացած է առաջին գոյնաւակին, բան մը
որ հաւասար է եղբոր միտալի մը: Թէ՛ ոսկի և թէ՛
պղինձէ միտալներ ունեցող նկարիչներու գործե-
րը քննիչ— դատաւորներու ուշադրութիւնն իսկ
չեն գրաւած, մինչդեռ Պ. Փ. Թէրլէմէզեանի
նկարած Մարդու իրանը ամենուն հիացմանը ար-
ժանացեր է:

Երեսունմէկ ազգայնոց ստորագրութեամբը
ղրկուած է մեզ հետեւեալը, հրատարակելու
խնդրանքով:

Աս . . . խմբագրութիւն «Հայելի» Հանդէսի.

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Տիար Ղազարոս Նահապետեանին

«Իրաւունք օի մէջ կարգացինք Ձեր «Դարամտիկ աս-
տարիին մէջ (?) ինչ կը մտածեն մեր գործիչները» յօդ-
ուածը:

Որպէս զի շատ անգամ ըսուած ու յեղձեղուած
խօսք մը կրկնած ըլլալու անպատեհութենէն ազատիք,
կը խնդրենք որ հաճիք բացատրութիւն տալ թէ ո՞րն է
այդ գործիչներու շրջանակը որուն կոչում կընէք մաք-
րել իր աղտոտութիւնները և թէ ինչպէ՞ս. ու յետոյ
ի՞նչ միջոցներով կարելի կը նկատէք մեր ու Ձեր՝ ամե-
նուս ողբացած արգի կացութիւնը դարմանել այնչափ լա-
ցէն յետոյ:

Ձեր որոշ ու համադիչ խօսքին կ'սպասենք, վասն զի

լացը դարման չէ և ոչ ալ ճամբայ մը ուրկէ քալէ խեղճ
ժողովուրդը Աւետեաց երկիրը հառնելու համար: Ընէք
ուրեմն թէ ի՞նչ ընել պէտք է:

25 Յունվար 1901

Վառնա

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն

Բարիզ 31 Յունվար

Պոլսոյ և արտասահմանի մէկ քանի թերթերու մէջ
ցաւ ի սիրտ հրատարակուեցաւ Պ. Գաւթիթպէկի ստորագ-
րութեամբ նամակ մը, իբր թէ Բարիզի հոգեւորակա-
նութիւնը երկու ուսանողներու առաջարկութեամբ վրայ
հանգուցեալ խորէն Եպիսկոպոս Ե. Ստէփանէի մահուանն առ-
թիւ հոգեհանգստի պաշտօն կատարած և Թաղական
խորհուրդին ալ մոմի դրամ պահանջած ըլլայ: Ասիկա
բացարձակ ՍՈՒՏ է. ճշմարտութիւնը սա է որ (զի ես
խիստ շատ մօտէն գիտեմ) Բարիզի հոգեւորականութիւնը
արդէն որոշած էր հոգեհանգստի պաշտօնը կատարել
սակայն օր չէր որոշած, երկու ուսանողներու առաջար-
կութիւնը փութացուց այդ պաշտօնը, իսկ Թաղ. խոր-
խուրդը ամենեւին մոմի համար դրամ չէ պահանջած,
այլ միայն մտերմօրէն հարցուցած է թէ ապագայ եկե-
ղեցւոյ շինութեանը համար ուսանողներէն ե՞րբ դրամ
պիտի կրնայ գանձուիլ: Յայտնի չէ թէ պարոն նամակա-
գիրը ինչո՞ւ համար մինակ Բարիզի հոգեւորականութեան
այդ պարտականութեանը վրայ կը ծանրանայ, մինչդեռ
անդին Ամբրիկա, Եգիպտոս, Թուրքիա, և Պուլկարիա
ամենեւին բան մը չըրին ու անոնց համար ոչինչ չը գը-
րեր և թէ ինչո՞ւ համար ինք Հայաստանեայց եկեղեց-
ւոյ կրօնական խնդիրներովը կը զբաղի, քանի որ նոյն
եկեղեցւոյ անդամը չէ:

ԱՐԳՈՍ

Հրատարակուեցաւ ԳՈՒԹԱՆ ամսօրեայ պատ-
կերադարձ հանդէսի Ա. թիւը, Հողագործական,
Գիտական և Արուեստական կարեւոր բովանդա-
կութեամբ: Տարեկանն է 12 ֆր: Վառնայի գոր-
ծակալն է Պ. Միքայել Հալաճեան, իսկ ի Պուլք-
րէշ Պ. Տիրան Շալճեան:

ՓՈՒՐԻ ԹՂԹԱՏԱՐ

Հրատարակուելու համար Տեպրիչէն մեզ
ղրկուած նամակը ըստ օրինի պէտք է գրողին
բուն ստորագրութիւնը կրէ, ոչ թէ հրատարակ-
ուելու համար, այլ երաշխաւորութիւն ապահո-
վութեան:

ՆՈՐ ՕՐԷՆՔԻ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Յրանսացի կարգ մը ընկերվարական երեսփոխաններ նոր օրէնքի մը ծրագիրը առաջարկեցին կառավարութեան, ըստ որում կը պահանջեն որ ծառաներու և սպասաւորներու ոտացած պարզէն անոնց տէրերը իրաւունք չունենան բան մը վերցնել, ընդհակառակը պարտաւորուին այդ ծառայողներուն ամսական ալ վըճարել:

Երկու խօսք բացատրութիւն այս մասին:

Յրանսացի սրճարաններու և ճաշարաններու մէջ ծառայողները ամսական չունին և նոյն իսկ շատ տեղեր այդ ծառայողները 2, 50 ֆրանքէն մինչև 10—15 ֆրանք կը վճարեն օրական տեղւոյն տիրոջը, այն օրը ծառայելու իրաւունքը ունենալու համար, վասն զի ծառան կամ սպասուհին կրնայ յաճախորդներու առատաձեռնութեամբ կլորիկ գումար մը շինել—այսպէս կը կարծուի գոնէ: Բայց եթէ յաճախորդ շատ ունեցող հաստատութեանց ծառայողները կրնան բաւական ստակ չահիլ, անդին շատեր չեն կրնար բան մը աւելցնել իրենց տիրոջը վճարելէն յետոյ: Ահա այդ պատճառաւ այդ երեսփոխանները կառավարիկն որ «սրճարաններու, ճաշարաններու, օթէլներու, պիւֆէներու, ակումբներու, սափրիչներու, կառքերու ընկերութեանց, թատրոններու, եկեղեցիներու, անհատական թանգարաններու, յուղարկաւորական ընկերութեանց, կարկանդակագործերու, բաղնիքներու, և այլնի մէջ ծառայողներուն ամսական վճարուի և անոնց ստացած պարզէներէն և ոչ մի փոքրիկ մաս հանուի, յիշեալ հաստատութեանց օգտին համար:

Այս առաջարկութիւնը շատ մարդասիրական է, բայց երբ պիտի քուէարկուի, Աստուած միայն գիտէ, յամենայն դէպս եթէ հրատարակուի, մեծ յեղափոխութիւն մը առաջ պիտի բերէ զանազան շրջաններու մէջ:

Բարիկ

Ս. Դ.

ՀԱՆՍԱԶԱՆԶ

Բարձր իմացականութեանց կանխահաւորներ

Ամեն երկիրներու նշանաւոր մարդոց մէջ շատեր նշանակելի եղած են իրենց արտակարգ կանխահասութեամբը, այսպէս Տանթէ 9 տարե-

կան էր երբ իր առաջին հնչեակը գրեց. Թաս 10 տարեկան էր երբ իր առաջին ոտանաւորները կը գրէր. Քալտէրոն սկսաւ գրել 13 տարեկան. Վիկթոր Հիլօ թուրուզի խաղերու ակադէմիին անգամ էր 14 տարու եղած ժամանակը. Լորտ Պայրըն 12 տարեկան եղած ատենը կը կազմէր իր ոտանաւորները. Մէյքլայէր մինակը դաշնակի նուագահարգէտներ կուտար երբ տակաւին 6 տարու էր. Թըլտ Վէննէ շատ գեղեցիկ կը նկարէր 7 տարեկան եղած ժամանակը. Միրապօ ամբողջ հատոր մը գրած էր երբ տակաւին 11 տարեկան էր. Հէօնտէլ 13 տարու էր երբ լատին եկեղեցւոյ ձայնագրութիւնը ըրած էր. Ռաֆայէլ նկարել սկսաւ 7 տարեկանէն. Վէրդէր իր առաջին օրերան ներկայացնել տուաւ 9 տարեկան. վերջապէս Բասքալ 12 տարեկան, գտաւ 32 քիմիական պարզ մարմիններ:

Խօսքի թուահաւար.—Գիտուն մը հաշուած է որ մարդ մը միջին հաշուով օրը երեք ժամ կը խօսակցի, մէկ ժամուան մէջ ալ 100 բառ կարտասանէ: Այս հաշուով իւրաքանչիւր անհատ մէկ շաբաթուան մէջ 400 էջի չափ կը խօսի և մէկ տարուան մէջ 52 ութամալ հատորներ: (Բոժ.—Անշուշտ այս թուահամարը կանանց չի պատշաճիր, որովհետեւ անոնք օրուան մը մէջ Ասմաւուրքներ կրնան լեցնել պարսպ խօսքերով:)

Ապահովագրական նոր ընկերութիւն մը.—Տանրմարքայի մայրաքաղաք Փօքէնհայի մէջ ապահովագրական ընկերութիւն մը կազմուել է, որուն նպատակն է ապահովագրել պառաւ ալջիկները, Պաշտօնէութիւնը կը յայտարարէ որ ըստ այն ալջիկները որոնք օրինաւոր ամուսնութիւն մը կազմած չեն, պիտի ապահովագրուին և պիտի ստանան ամսական թոշակ մը: Անշուշտ ասիկա ամուսնի մնալու քաջալիք մըն է որ անբարոյականութեան կը նպաստէ:

Պերլինի ոստիկանութիւնը տեղեկագրէր մը հըրատարակելով կը շատագովէ Պէրդիյոնի մարդաչափական դրութեան առաւելութիւնները, որոցմով կարելի կըլլայ յաջողապէս ճանչնալ այն յանցաւորներ, որք բանտէն ազատ արձակուելէ ետեւ հազարումէկ միջոցներու կը դիմեն փոփոխելու համար իրենց դէմքին ու տարալին ամէն բնորոշ հանգամանքները: Տեղեկագիրը կ'եղրակացնէ թէ Գերմանիոյ բոլոր ոստիկանական վարչութեանց մէջ հարկ է գործադրել այս գրութիւն, ինչպէս որ տարիէ մը ի վեր կը գործադրուի Պերլինի մէջ և այլուր:

ԱՍՏՂ

ՏԱՐԻՔԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ

1	2	4	8	16	32
3	3	5	9	17	33
5	6	6	10	18	34
7	7	7	11	19	35
9	10	12	12	20	36
11	11	13	13	21	37
13	14	14	14	22	38
15	15	15	15	23	39
17	18	20	24	24	40
19	19	21	25	25	41
21	22	22	26	26	42
23	23	23	27	27	43
25	26	28	28	28	44
27	27	29	29	29	45
29	30	30	30	30	46
31	31	31	31	31	47
33	34	36	40	48	48
35	35	37	41	49	49
37	38	38	42	50	50
39	39	39	43	51	51
41	42	44	44	52	52
43	43	45	45	53	53
45	46	46	46	54	54
47	47	47	47	55	55
49	50	52	56	56	56
51	51	53	57	57	57
53	54	54	58	58	58
55	55	55	59	59	59
57	58	60	60	60	60
59	59	61	61	61	61
61	62	62	62	62	62
63	63	63	63	63	63

Յայտնի է որ ընտանեկան շրջանակներու մէջ երբ տարիքի խնդիր կը ծագի, շատեր իրենց տարիքը կը ջանան ծածկել. բայց մենք եթէ ուզենք պիտի յաջողինք անոնց տարիքը իմացնել, հետեւեալ կերպով.

Տարիքը գրտնալ ուղած անձերնուս պիտի առաջարկենք վերոգրեալ ցուցակը աչքէ անցունել և անոր վեց սիւնակներուն մէջ փնտռել իւր տարիքը, առանց մեզի յայտնելու. միայն թէ երբ իրեն հարցնենք որ քանի՞ սիւնակի մէջ տեսաւ իւր տարիքին համապատասխանող թիւը, պիտի հաճի պատասխանել. այն ատեն պիտի իմացնենք իրեն տարիքը. Օրինակ. — Ենթադրենք որ 17 տարեկան երիտաւարդի մը ներկայացուցիք ցու-

ցակը, որ այդ թիւը փնտռելով՝ 1 և 5րդ ցուցակին մէջ նշանակուած ըլլալը կիմացնէ. այն ատեն մենք նոյն երկու սիւնակներու գլուխը գտնուած առաջին թիւերը (մէկ և տասնըվեց) մտովի գումարելով կըսենք թէ 17 թիւն էր իւր միտքը պահածը. երկրորդ օրինակ միայն. — Մէկը ցուցակին մէջ 47 թիւը միտքը պահած ըլլայ. երբ հարցնենք իրեն թէ «ո՞ր սիւնակին մէջ կը գտնուի», պատասխան պիտի առնենք. «Ա. Բ. Գ. Դ. և Զ սիւնակներուն մէջ». հետեւեալ այդ սիւնակներու առաջին թիւերը 1, 2, 4, 8, 32 մտքովիս գումարելով կը գտնենք 47:



Ծ Ի Ծ Ա Ղ

Երկու երիտաւարդ ամուսնի.

Ոհ, սիրելիս, իրաւունք ունին երբ կըսեն թէ ամուսնութիւնը վիճակահանութեան կը նմանի:

— Այո՛, աւա՛ղ, և վիճակահանութիւն մը, որուն մէջ մարդ վստահ է որ անպատճառ բան մը պիտի կորսնցնէ:

Իւրանտայի կառավարիչ լօրտի մը կինը օր մը մէկուն այցելած էր, հոն վիճաբանութեան մը միջոցին, կը յայտնէ թէ իւրանտայի օդը շատ դեղեցիկ է:

Տանտիրուհին հետեւեալ պատասխանը կուտայ.

«Աստուծոյ սիրուն երբ Անգլիա երթաք բան մը մի ըսէք, որովհետեւ ատոր համար ուր տուրք մը կը դնեն.»

Փոքրիկ Վարդանուշ վարժարանին մէջ լաւ նօթ առած ըլլալուն համար կարմիր շաքարէ հաւկիթ մը ստացաւ մօրմէն, որուն համար շատ շնորհակալ եղաւ և մօրը դառնալով ըսաւ.

— Մայրիկ սա հաւկիթը ամողը մեր Աշխէնը (տան սպասուհին) ըլլալու է:

— Ինչո՞ւ համար, Վարդանուշ:

— Որովհետեւ անցեալ օր քու տունը չգրտնուած ժամանակդ հայրիկի Աշխէնին «անուշ», շաքարս, խուշիկս» կըսէր, և «շաքարէ խուշիկ» մը միայն կընայ շաքարէ հաւկիթ ամել:

—Պարոն, կրնա՞ք ինձ ըսել թէ ի՞նչ պատահեցաւ, և ինչու համար այս բազմութիւնը դէպի հոն կը վազէ:

—Մէկը ուրիշի մը հետ 2 ֆրանքի գրաւ դրած էր, և երբ գրաւը կորսնցուց, փոխանակ գրամը գրաւը շահողին տալու, բերանը նետեց ու կլկեց, բայց կերելի թէ մինչև վար չէ գացեր. որովհետեւ շնչահեղձ փռուած է գետինը:

—Անպատճառ խաղալ փարա մը ըլլալու է որ զայնապէս մարդուն պողպատէ մնացեր է:

Հինգ զգայարանները, ըստ փոքրիկ Աստիկի վարդապետութեան.

—Աչքերը շինուած են լալու համար:

—Բերանը՝ ուտելու համար:

—Քիթը՝ խնչելու համար:

—Ձեռքերը՝ խաղալու համար:

—Իսկ ականջները... ձգելու համար որ միւսին ուղածին պէս երկնցնէ:

Առողջաբանութեան դասատուն. —Դուն ըսէ նայիմ Գրիգոր, կերակուրը լաւ մարսելու համար ճաշելէ ետքը ի՞նչ ընելու է:

—Խօջի խահուէ մը խմելու է:

Մայր մը իր 7 տարեկան տղուն.

—Կարպիս, ալ կը բաւէ, բաւական կարկանդակ կերար:

—Հոգ չէ՛. մայրիկ, փորս ցաւիլ չսկսաւ տակաւին:

Դատարանի մէջ.

Դատաւորը. —Բայց տիկին, էրիկդ որմէ կը գանգատիս, կըսէ թէ շատ կը սիրէ զքեզ:

Կինը. —Այո՛, տէր դատաւոր, հակառակը չեմ պնդեր, և կը հաւատամ թէ սիրտն իսկ ուժգին կը զարնէր:

Դատ. —Է, հիմա...

Կինը. —Հիմա... ձեռքն է որ ուժգին կը զարնէ:

Դիւղացի խանութպան մը քաղաք երթալով մէկ քանի տեսակ ասուելէն ապրանքներ կը գնէ և վերադարձին ճամբուն վրայ կը շրջապատուի խումբ մը աւաղաճներէ որք անմիջապէս անոր ծրարը բանալով՝ կ'սկսին մէջերին բաժնել:

—Ինչո՞ւ համար ամենքն ալ կարմրագոյն չի բերիր, կը հարցնէ աւաղակապետը:

—Ես ի՞նչ գիտնայի որ ասանկ ամենը մէկանց պիտի ծախուէր. կը պատասխանէ զուարճախօս գիւղացին:

Աւաղակապետը այս պատասխանէն խիտ դոհ մնալով՝ ծրարն իւր պարունակութեամբը գիւղացիին կը յանձնէ:

Կուրծքին վրայ ուռ (գանպուր) ունեցող մարդ մը յունաստանի քաղաքներէն մէկը կերթայ. քաղաքացիք զայն շրջապատելով կ'սկսին ծաղրել ու ըսել թէ՛ «ամեն մարդ իր ծրարը կրնակը առած կերթայ, դուն ինչո՞ւ համար կուրծքիդ վրայ կը կրես»:

—Ի՞նչ ընեմ ե՛ղբարք, կը պատասխանէ պատրաստաբան մարդը, առանց խռովելու, անառակը, գոյն ու աւաղակը շատ դռնուած տեղերը ասանկ ընել կը վայլէ եղբր:

Օրիորդ, ձեզի համար կըսեն թէ 35 տարեկան էք, արդեօք իրա՞ն է:

—Բան գործ չունին նէ թող ըսեն. մօրմէս աղէկ չիյտեն ես, դեռ անցեալ օր էր ըսաւ թէ 25 տարեկան 190 պիտի լինեմ:

—Բայց մաղերդ ճերմկիլ սկսեր են:

—Մօտային յարմարելու համար դիտմամբ ճերմկացուցի:

—Էյ, երեսիդ թմրկածութիւնը:

—Ան ալ խորէլէզի նշան է:

Տիկին 2... իր ամուսնոյն.

—Աս ի՞նչ տեսակ մարդ ես, չխմած ատենդ կը քնանաս, չքնացած ատենդ ալ կը խմես:

—Ուրիշ տեսակ չեմ կրնար ընել, կնիկ, հիշ մարդ երկուքը մէկէն կրնայ ընել:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (4)

ՈՐՆԷ ՏՐ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՈՒՐՄԻՐ-ՄԱՄՈՒԿԸ)



Չինաստանի մէջ, ինչպէս նաեւ մեր երկիրներուն մէջ, ոտտիկանութեան հասնելէն առաջ արգիւցուած է գալիլ սպանուած անձի մը, ոչ միայն որպէս զի ոստիկանապետները կարենան տեղեկանալ՝ մարմինն բնուած թնէն ու գիրքէն՝ թէ ոճիրն ինչ եղանակով գործուած է, այլ և որովհետեւ ամեն կալուածատէր սրուն հողին վրայէն գտնուած է մեռելով մը, կրնայ հանգուցելոյն ընտանիքին կողմէ գատի կանչուիլ, և մեծագումար տու գանքի, շատ անգամ ալ բանտարկութեան ենթարկուիլ:

Խուզարկու ակնարկ մը նետելէ ետք չորս դին, Ֆո-Հօթ խնդրեց զօհին հօրմէն որ ըսէ իրեն այս խորհրդաւոր ոճիրն վրայ գիտցածները: Յետոյ բանալ տուաւ դիակը, ուսկից անդին դարձուց Լէնկ-Թիէն-Լօ իր աչքերը, և երկարօրէն բնեց պայն:

Յետ որոյ գնաց եկաւ ծառուղիին այն տեղն ուր վը գտնուէր մարմինը, գետինը բնեցելով, հետք մը փնտռելով, յայտնաբերէր կատարելով մտաւորական աշխատութիւն մը որ սաստիկ կը մտազրադեցնէր զինքը:

Ասիկա մէկ քանի վայրկեան տևեց:

— Պարոն, ըսաւ վերջապէս զժքաղդ վաճառականին, ձեր դաւաճը իր կնոջ ձեռքով սպանուած չէ. հուժկու մարդու ձեռք մըն է որ բացած է այս խորունկ եւ լայն վերքը: Ասկից զատ ամեն բան ենթադրել կուտայ իննի թէ զաւակնիդ զարնուած է առանց ինքզինքը պաշտպանել կարենալու, վասն զի բնաւ կոուի հետք չեմ տեսներ իր գտնուած տեղին շուրջը, մինչ հոս մօտը կը նշմարեմ կոխկոտորներ և ծիւղնուր մեկորներ որք կը ցուցունեն թէ հոն ինկած է: Մինակ, որովհետեւ այս բեկորներէն ոչ մէկը արեամբ արատուած չէ և ձեր գաւկին հազուստներուն ծայրն ալ չէ աղտոտած, կը հետեւցունեմ թէ դաշոյնը ետքէն գործածուած է, այն ատեն երբ գետին պառկած էր, անշարժ և իր սպանչին իշխանութեանը տակ:

— Ձեր կարծիքն ի՞նչ է ուրեմն, հարցուց Լէնկ, որ սոսկմամբ մտիկ կընէր բոլոր այս մանրամասնութիւնները:

— Կամ շատ կը սխալիմ, կամ ձեր որդին ծառու-

ղին մէջ բռնուելով՝ անշարժութեան դատաւարտուեր, գուցէ խեղդուեր է երկու ուժեղ բազուկներու մէջ, յետոյ մեր տեսած տեղը խոխարդուելով մարդասպանին կողմէ՝ հոն խողիւղուեր է: Ապացոյցն ալ սա է որ այս երկու տեղերը, կոուին և մահուան տեղերն իրարմէ բաժնող միջոցին վրայ, մէկ մարդու ոտքին հետքեր միայն կը տեսնուին, որք խորապէս դրոշմուած են աւազին մէջ, իբր թէ ծանր բեռով բեռնաւորուած ըլլար մարդը: Դո՛ւք ինչ կըսէք, Միմ-Բօ:

Այս վերջին խօսքը կողողուէր երրորդ անձի մը որ, Լէնկ-Թա-Լանկի վրայ ծուած, բացած էր անոր հագուստները և վերքը կը դիտէր ուշի ուշով:

Այս նորեկը ընտանիքին բժիշկն էր, զոր գացած բերած էին:

— Ձեր վսեմութիւնն անշուշտ իրաւունք ունի, պատասխանեց տրթորը, այս վերքը բացուած է ծանր ու երկայրի զէնքով մը, զոր քին մը չի կրնար գործածել. ասկից զատ, մեռելին շուրթերը իրենց գոյնովն և ուռեցքովը կը ցուցունեն որ սպանելէ առաջ, եթէ ոչ թոյն, դէթ ցնորեցուցիչ թմբադեղ մը տուած են: Ասոնցմէ ո՞րը: Ասիկա աւելի դժուար պիտի ըլլայ ինչի ճշդել:

— Պարոն Լէնկ, յարեց Ֆո-Հօթ, հպարտ ժպտով մը, կրնաք վերցունել տալ ձեր զաւկին մարմինը: Թող այս կինն իր սենեակը փոխադրուի և երէկ իրիկուն իրեն մօտ գտնուող աղախինները բովը երթան անմիջապէս: Նոյնպէս հրաման տուէք որ մէկը դուրս չելլայ ասկից:

Սոյ-Պրոտէ ներկայ էր այս սոսկալի տեսարանին, առանց բան մը հասկնալու երեւոյթի:

Սեւառաբիք աչքերը իր ամուսնոյն արիւնշաղախ դիակէն կերթային իր կետրայրին և հոն գտնուող միւս անձերուն:

Կարծես իր բոլոր խնայականութենէն զրկուած էր արդէն:

Երբ զգաց որ կը վերցունեն զինքը, փորձեց բալել, բայց իր սրունքներ իսկոյն կթռտեցան:

Հարկ եղաւ գրկելով տանիլ:

Նոյն վայրկեանին դիակը վերցունող ծառաները հոգաւոր մը փտան տակէն որ մինչև այն ատենը չէր նշմարուած:

Ծառաներէն մէկը ոստիկանութեան վերատեսչին տուաւ զայն:

— Այս հովահարը ձեր զաւկի՞նն է, հարցուց այս վերջինը Լէնկ-Թիէն-Լօ:

— Ո՛հ, ըսաւ ծերունին տխրութեամբ՝ գլուխն ե-

ընթացումը, չեմ գիտեր որին ըլլալը: Մնաց որ իր անունը չի կայ ասոր վրայ:

Հովհաննէսը արդարեւ իր մէկ շէգըին վրայ կը կրէր որոշ անուն մը արիւննոտուած, և այս անունը փետինը չէր:

— Ուրեմն իր սպանչինն է, գոչեց պաշտօնատարը: Սիրտ առէր, բարեկամս, միայն այս նշանին շնորհիւ, երեւան պիտի հանենք զայն: ձեր զուգին վրէժը պիտի լուծուի:

Եւ այդ ապացոյցը իր մէկ սպային յանձնելով, Քո—Հօթ հրամայեց իր քարաուկարին որ իրեն հետևի:

Ամենքն ալ զէպի տուն ուղղուեցան:

Վերադառնալիս հրամանները գործադրուած էին: Սօլ—Պրոտէ առաջուց հօն փոխադրուած էր:

Վերադառնալիս ինչպէս նաև աղախինները, անոր քով գացին, այն հարսանեկան սենեակը ուր աղջիկը տեսանք իր ամուսնոյն սպասած պահուն:

Յարկաբաժինը տակնուվրայ էր միշտ, ինչպէս գլխած էր խեղճ հայրը երբ դուրս հանած էր անկից իր հարսը:

Վերադառնալիս ամեն բան բնեց ամենամեծ խնամովը, բազմաթիւ նօթեր առաւ, և սենեկապանուհիներուն հարցաքննութեանը տնցաւ:

Ամենուն պատմածն ալ համաձայն էր իրարու:

Կէս գիշերին, լսելէ ետք իրենց տիրուհիին գրան զարնուիլը, բացած էին փետին, զոր ճանչցած էին իր ճոխ պետէն: Հակառակ կէս մթնութեան որ կը տիրէր իրենց սպասած սենեկին մէջ: Յետոյ առած քալած էին:

Հետեւապէս չէին գիտեր թէ Լէնկ—Թա—Լոնկ իր կնոջ սենեակէն դուրս էր ելած և ո՞ր ժամուն, կամ թէ ուրիշ մարդ մը մտած էր հօն:

Գալով Սօլ—Պրոտէի, ինքն ալ աւելի բան մը չէր գիտեր:

— Չեմ գիտեր որ ժամուն, պատասխանեց Քո—Հօթին, ջանալով բիշ մը հանդարտիլ, ամուսինս այս սենեակը մտաւ, սարսափեցայ ու նուաղեցայ: Ա՛լ ուրիշ բան չտեսայ, միայն մահաբոյր աղաղակները լսեցի որք այս առտու արթնցողին գիտ: Ուրիշ բան չեմ կրնար ըսել:

— Ի՞նչ, յարեց ոստիկանութեան վերադառնալիս խիստ ձայնով, կը մոռնա՞ր այն վայրկեանն ուր ձեր ամուսինը հեռացաւ քովերնուդ, իր մեկնումէն ետք չը լսեցի՞ր մէկուն ներս մտնելը: Ուրիշ մարդ մը ձեր քով տեղադրուելու է, աւաստի իր ձեռքին արիւննոտ գրոշմը բարձին վրայ ուր գրած էիք ձեր գլուխը. այս անձանօթը կրցած է կոտրել այս արկղիկը, գոհարները գողնալ և խոյս տալ՝ առանց բան մը զգացնել տալու ձեզ:

— Չեմ գիտեր եղածը, կ'երդնում, մոռնեց մանկամարդ կինը, նորէն ինքի վրայ կըքելով:

— Չէ՞ր ճանչնար սա հովհաննէսը, հարցուց Քո—Հօթ ստիպելով զայն որ վեր առնէ աչքերը:

— Ո՛չ, թոթովեց Սօլ—Պրոտէ, ո՛չ:

— Սա անունէն բան մը չէ՞ք հասկնար:

— Այս անունէն: Բայց այո, կը ճանչնամ զայն, պատասխանեց տարաբախտ աղջիկն աշխուժով, որ արցունքներուն մէջէն անոր կը նայէր եւ որուն շուրթերն իսկոյն յոյժի ժպիտ մը ունեցան, Ի—Թէինն է:

— Ի—Թէն ով է:

— Ի—Թէն, դարմիկս, Միի կուտան մէջ աստղաբաշխութեան ուսուցիչը:

— Լա՛ւ ուրեմն, այդ Ի—Թէն է ձեր ամուսինն ըսալանիչը, վասն զի այս հովհաննէսը իր գիտելին տակէն գտնուեցաւ: Դուք, դուք իր մեղսակցին էք:

Այս սոսկալի եւ կարուկ ամբաստանութիւնը լսելով մանկամարդ աղջիկը սոսկումի աղաղակ մը արձակեց եւ գետին թաւալեցաւ:

— Պահակներ, բռնեցէք սա թշուառականը, հրամայեց պաշտօնատարը. արգարութեան կը պատկանի:

Հինգ վայրկեան ետքը, գահաւորակը որուն մէջ անկենդան փռուած էր Սօլ—պրոտէ, դուրս կ'ելլէր վիլանն՝ տմրոխին հայհոյանքներուն մէջէն:

Ժամ մը չքշած, ոստիկանները Գանդոնի բանտին բակը կը ձգէին իրենց տխուր բեռը:

(Շարունակելի)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԳԻՐԲ ՖՐԱՆՍՍԱԶԱՅ

Պատկերազարդ

Հասոր Առաջին Ա—Է

Սոյն բառգիրքը որ Ն. Ա. Բարձր. Իշխան Լուսինեանի երկար տարիներէ ի վեր կատարած ուսումնասիրութեանց արդիւնքը կը ներկայացնէ, այս անգամ հրատարակելու է 1061 երեսներէ բաղկացեալ: Սա իր տեսակին մէջ առաջինն է, որովհետեւ գիտական, բուսական, ճարտարագիտական, բժշկական և այլ ամեն տեսակ անհամար բառեր պարունակելով, անոնց այլ եւ այլ իմաստները կը սորվեցնէ ոճերու մանրամասն բացատրութեամբ և գեղեցիկ պատկերներով: Ֆրանսերէն և շախրէն լեզուներուն միանգամայն ծանօթանալու և զոյններուն համար անհրաժեշտ պէտք մըն է այս: Ամբողջ գործը երկու հատորէ պիտի բաղկանայ: Ա. հատորի թղթակազմին գինն է 25 ֆրանք: Պուլկարիոյ և «ուսանիցի» մէջ ստանալ փափագողները պէտք է գիմնէ Հայկիոյ խմբագրութեան:

Печатница „Взаимность“ — Варна.